ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հոկտեմբերի 11-ի, ժամը 14:00-ի նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Ալբերտ Արմենի Հայրապետյանի** ներկայացրած՝ Լիխտենշտեյնի գահակալ իշխան Հանս Ադամ Երկրորդի հեղինակած **«Պետությունը երրորդ հազարամյակում»** գրքի հայերեն թարգմանության հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. Լիխտենշտեյնի գահակալ իշխան Հանս Ադամ Երկրորդն իր հեղինակած գրքում ներկայացնում է երրորդ հազարամյակի պետության կառավարման մոդել՝ հիմնված ժողովրդավարության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի վրա: Գրքում իշխանը քննարկում է հարցերի լայն շրջանակ՝ ինքնորոշման իրավունքի իրավական որոշակիությունից մինչև կրթական համակարգի կառավարում և տրանսպորտային համակարգի արդյունավետությունից մինչև առևտրային և դրամավարկային քաղաքականություն: Իր մտքերն ու գաղափարները հիմնավորելու համար իշխանը հիմնվում է քաղաքագիտական և տնտեսագիտական մի շարք տեսությունների վրա: Հատկանշական է, ի տարբերություն շատ հեղինակների, իշխանը՝ լինելով երկրի ղեկավար, հնարավորություն է ունեցել գործնականում ցույց տալ իր առաջարկած տնտեսագիտական և քաղաքագիտական լուծումների արդյունավետությունը, երբ Լիխտենշտեյնը դարձավ մոլորակի ամենահարուստ երկրներից մեկը՝ ոչ միայն չունենալով դեպի ծով ելք, այլ նաև շրջապատված լինելով դեպի ծով ելք չունեցող պետություններով: Գիրքը ուսանելի և օգտակար կլինի տնտեսագիտությամբ և հարակից գիտակարգերով հետաքրքրվող անհատների, տնտեսագետների, ֆինանսաբանկային համակարգի մասնագետների ու կազմակերպությունների համար:

Գրքի վերաբերյալ ստացվել է 4 դրական կարծիք.

1) Դիանա Գալոյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

2) Արման Սարգսյան՝ Հայաստանի բանկերի միության գործադիր տնօրենի տեղակալ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

3) Արամ Անանյան՝ «Արմենպրես» պետական լրատվական գործակալության տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու:

4) Ռուբեն Ղանթարչյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ Լիխտենշտեյնի գահակալ իշխան Հանս Ադամ Երկրորդի հեղինակած գիրքը բացառիկ աշխատանք է, իսկ դրանում տեղ գտած տեսությունները, գաղափարները և մտքերն առավել քան արժեքավոր ու այժմեական: Գրքի հայերեն թարգմանությունն ավելի քան սպասված իրադարձություն է և դրա հրատարակությունը կապահովի էական օգտակարություն: Այն կարող է դառնալ տնտեսագիտությամբ, քաղաքագիտությամբ և միջազգային հարաբերություններով հետաքրքրվող ուսանողների և հետազոտողների ամենասիրելի «սեղանի գրքերից» մեկը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Ա.Շ.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Ալբերտ Արմենի Հայրապետյանի** ներկայացրած՝ Լիխտենշտեյնի գահակալ իշխան Հանս Ադամ Երկրորդի հեղինակած **«Պետությունը երրորդ հազարամյակում»** գրքի հայերեն թարգմանությունը երաշխավորել հրատարակության՝ 500 օրինակ տպաքանակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 56, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2021 թ. հոկտեմբերի 11
Երևան